ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» _____2024թ. №___Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂ. 24 ՇԵՆՔԻ Հ.64 ԲՆԱԿԱՐԱՆԻ 1/3 ԲԱԺՆԵՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2024 թվականի ծրագրի վերաբերյալ» № 50-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Ա.Խաչատրյան փողոց թիվ 24 շենքի հ.64 բնակարանի 1/3 բաժնեմասը (անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման №22052019-01-0306 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) նույն բնակարանի 2/3 բաժնեմասի սեփականատեր Համլետ Ռոբերտի Ավագյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂ. 24 ՇԵՆՔԻ Հ.64 ԲՆԱԿԱՐԱՆԻ 1/3 ԲԱԺՆԵՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Արաբկիր վարչական շրջանի Ա.Խաչատրյան փողոց թիվ 24 շենքի հ.64 բնակարանի 1/3 բաժնեմասը սեփականության իրավունքով օտարել /նվիրել/ Համլետ Ռոբերտի Ավագյանին: Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.22052019-01-0306 վկայականի՝ նշված հասցեի բնակարանի 1/3 բաժնեմասը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևան քաղաքի Ա.Խաչատրյան փողոց թիվ 24 շենքի հ.64 կոոպերատիվ բնակարանը սեփականության իրավունքով պատկանել է Համլետ Ավագյանի ծնողներին՝ Ալիսա Ավագյանին (մահացած՝ 2002թ.), Ռոբերտ Վասակի Ավագյանին (մահացած՝ 10.08.2008թ.): Ռոբերտ Ավագյանը 26.05.2008թ.-ին բնակարանի իրեն պատկանող մասը կտակել է Համլետ Ավագյանին: Ծնողների մահվանից հետո դիմումատուի եղբորը՝ Արմեն Ռոբերտի Ավագյանին, որպես ժառանգություն է անցել տվյալ բնակարանի 1/3 մասը: Վերջինս 01.11.2009թ.-ին մահացել է, որից հետո նրան պատկանող բաժնեմասի նկատմամբ ոչ մի հերթի ժառանգ չի ընդունել նրա ժառանգությունը:

Այնուհետև ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.04.2014թ. ԵԱՔԴ/0821/02/13 վճռով Ա.Խաչատրյան փող. թիվ 24 շենքի հ.64 բնակարանի՝ հանգուցյալ Արմեն Ռոբերտի Ավագյանին պատկանող, 1/3 մասը ճանաչվել է անժառանգ գույք և անժառանգ գույքի նկատմամբ ժառանգության իրավունքի 16.05.2019թ. №2107 վկայագրի հիմքով բնակարանի 1/3 բաժնեմասի նկատմամբ գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը:

Ա.Խաչատրյան փողոց թիվ 24 շենքի հ.64 բնակարանի 2/3 բաժնեմասը՝ (ժառանգության իրավունքի վկայագրի ըստ կտակի 14.03.2024թ. №6802 և ժառանգության իրավունքի վկայագիր ըստ օրենքի 14.03.2024թ. №6803 հիմքերով) հանդիսանում է Համլետ Ռոբերտի Ավագյանի սեփականությունը (վկայական №20032024-01-0203):

Այժմ Համլետ Ավագյանը ցանկանում է համայնքին սեփականության իրավունքով պատկանող Ա.Խաչատրյան փող. թիվ 24 շենքի հ.64 բնակարանի 1/3 բաժնեմասը նվիրատվության կարգով օտարել իրեն, քանի որ այն տիրապետվում է իր կողմից և այլ անձի հնարավոր չէ օտարել:

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի հ. 50-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 26.12.2023թ. հ.50-Ն որոշման հավելվածի (Ծրագրի) 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունել համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ